ՀՏԴ 738:7.036
https://doi.org/10.67819/30453267-26.1qh1-02

ՔՅՈԹԱՀԻԱՅԻ ՀԱԽՃԱՊԱԿԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՐՏՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Մերի Ա. Ավետիսյան
Երևան, Հերացի փ., 2/1 շենք,
e-mail: avetisyanmeri1997@mail.ru

Անահիտ Մ. Գրիգորյան
Մ. Մաշտոցի անվան համալսարան,
Երևան, Հերացի փ., 2/1 շենք,
e-mail: hitgrigoryan@mail.ru
ORSID ID: 0009-0007-9292-8672

Ամփոփում

Աշխատանքում հետազոտվել է Քյոթահիայի հայկական դեկորատիվ կիրառական արվեստի ոճային առանձնահատկությունները, մասնավորապես, հախճապակեգործության բարձրարժեք նմուշները: Քյոթահիայի կիրառական արվեստի կրոնական, բարոյախրատական, երբեմն նույնիսկ խաղարկային պատկերագրությունները վկայում են արհեստագործական միջավայրի մշակութային արտահայտչականության մասին[1]:

Աշխատանքում ներկայացվել է Քյոթահիայի կերամիկայի, խեցեգործական կերտվածքների ուսումնասիրությունը՝ բացահայտելու խաչմերուկվող մշակույթների, ավանդույթների դարաշրջանը, երբ արվեստը ոչ միայն ծաղկում էր, այլև ծառայում էր որպես ազգային ինքնության, համայնքային հիշողության և գեղագիտական փորձի կրող: Այն հենք է հանդիսանում ժամանակակից կիրառական արվեստի համար՝ իր բազմաշերտությամբ և ոճական համադրություններով**[2,3]:** ՈՒսումնասիվել են Քյոթահիայի կավակերտ ձևակազմությունների աշխարհայացքային միտումները՝ արտահայտված տեղական հայկական ավանդույթների, պարսկական, սելջուկյան և բյուզանդական արվեստների գեղարվեստական լեզուներով: Առաջադրվել են նորարարական լուծումներ ազգային ձևագոյացման հենքով հախճապակեգործության ժամանակակից հորինվածքներ ստեղծելու համար[4,5]:

Հիմնաբառեր. կավակերտ ձևակազմություն, խեցեգործական կերտվածք, բուսական և երկրաչափական զարդանախշեր, ազգային ձևագոյացման հենք, գեղարվեստական նորարարություն:

Նորույթը

Վերջին տարիներին կատարված գիտական հետազոտությունները՝ ինչպես թուրքական, այնպես էլ հայկական և միջազգային շրջանակներում, վերածել են Քյոթահիան արվեստաբանական, պատմական նշանակության կենտրոնի[6,7,8]: Արբակ Մխիթարյանի աշխատություններում լուսաբանվում են Քյոթահիայի հայ վարպետների դեկորատիվ կիրառական արվեստում ներգրավվածության մասին՝ սկսած ձևագոյացման տեխնիկայից մինչև պատկերագրական լուծումները[8,9]:

Աշխատանքում ուսումնասիրել ենք Քյոթահիայի հախճապակեգործությունը՝ կավից խեցեգործական կերտվածքների, դրոշմազարդարված դեկորատիվ սալերի ոճային առանձնահատկությունների դիտարկմամբ, որոնք հայկական, հունական եկեղեցիների, օսմանյան մզկիթների ինտերիերում որպես զարդարանքի միջոցներ էին հանդիսանում:

Քյոթահիայի հախճապակեգործության ազգային ձևագոյացումներին ժամանակակից նորարարական միտումների համադրմամբ առաջադրել ենք նորառոճ լուծումներ՝ դիմակայող միջազգայնացման մարտահրավերներին.

- հանաչափական համակարգի մասնատման և անհամաչափ տարրերի ներմուծման միջոցով[8] կստեղծվեն նորառոճ, ազգային կարողություններով հորինվածքներ ավանդական համաչափական տարրերի գերակա պահպանությամբ,
- ազգային զարդանախշերի և նորառոճ հորինվածքների համակցմամբ կստեղծվեն նորառոճ, ազգային կարողություններով հորինվածքներ՝ երկրաչափական, բուսական, կենդանակերպ նախշազարդումներով նորովի ընդգծելու նորառոճությունը,
- նորառոճ հախճապակե հորինվածքներում ազգային բովանդակությունն արտահայտող դեկորների շեշտադրումներով կձևավորվեն տեկտոնական համակարգեր ներդաշնակ հորինվածքի գործառնականությանը:

Ներածություն

Քյոթահիայի հախճապակեգործությունը, իր բովանդակային հարուստ ժառանգությամբ, ստեղծագործական նրբություններով ու պատմական խոսքով, շարունակում է մնալ մշակութային ինքնության հզոր խորհրդանիշ: Նրա ուսումնասիրության, պահպանման և հանրահռչակման խնդիրները արդիական են ինչպես ակադեմիական, այնպես էլ պետական և միջազգային մակարդակներում: Միայն այս կերպ հնարավոր է բարձրարվեստ ժառանգությունը ըստ արժանվույն գնահատել համաշխարհային մշակութային ժառանգության համատեքստում:

Հետազոտության մեթոդաբանությունը

Գիտական գրականության ուսումնասիրության, պատմագրական-վերլուծական դիտարկումների՝ վերացարկման, համեմատական վերլուծությունների մեթոդաբանությամբ, հետազոտվել է Քյոթահիայի հախճապակեգործության համաժամանակյա շքեղությունն ու բազմազանությունը, ինչը արդիական է այժմյան կիրառական արվեստում: Այս ժառանգությունը վերաիմաստավորվում է անցյալի փառահեղության տարրերի պահպանությամբ և նորովի լուծումներով:

Հետազոտություն

Հին հույների պատմական հայրենիքում՝ Փռյուգիա, հիմնադրվել է Քյոթահիան: Ավելի ուշ այն թրքացել է թուրք օղուզների մշտական հոսքի հետևանքով:

20-րդ դարի հայ արվեստաբան, արվեստագիտության դոկտոր Նոնա Ստեփանյանը Քյոթահիայի հայկական արվեստի մասին գրում է**[6].** ‹‹16-17-րդ դարերում տիրող հանգամանքներում գեղարվեստական ստեղծագործությունը փոխում է իր կողմնորոշումը, առավել տարածում են ձեռք բերում առօրյայի հետ անմիջականորեն կապված արվեստները, կենցաղային տնտեսությունը, այդ թվում՝ կիրառական արվեստը: Կիրառական արվեստի տարբեր տեսակներն ու ճյուղերը պահպանում են առավել վաղ ժամանակների դեկորատիվ կիրառական արվեստի առանձնահատկությունները, ժամանակի յուրահատկությունները, ժողովրդականությունը և տարածվում են նորովի: ՈՒշ միջնադարը այն ժամանակն է, երբ ամբողջ աշխարհում հայ վարպետները ամրապնդում են իրենց հեղինակությունը››[1,6]:

16-րդ դարում Քյոթահիան Իզնիկի մրցակիցն էր կերամիկայի և ներկված սալիկների արտադրության մեջ: Մեծ թվով հայ վարպետներ զբաղվում էին կերամիկական իրերի արտադրությամբ: Քյոթահիայի հայկական արտադրանքը հայտնի էր ամբողջ աշխարհում: Դրանք զարդարում էին թագավորական և իշխանական սեղանները: Օսմանյան սուլթանները ևս իրենց սպասքը պատվիրում էին Քյոթահիայի հայ վարպետներին: Քյոթահիայի հայ խեցեգործները մեծ ավանդ ունեն տարածաշրջանի խեցեգործության զարգացման գործում: Քյոթահիան կերամիկական արդյունաբերության օսմանյան հայտնի կենտրոնն էր՝ մզկիթների, եկեղեցիների և պաշտոնական շենքերի կառուցապատման սալիկների արտադրության ասպարեզում[1,9]:

Քյոթահիայի հախճապակեգործության մասին շատ արվեստաբաններ վկայում են սկսած 16-րդ դարից, սակայն դեռ 14-րդ դարում այստեղ ապաստանել են Անիի, Դվինի հայերը և պարսկահայերը: Ռուս արվեստաբան, մշակութաբան՝ Յուրի Միլլերը**[10]** գրում է, որ խեցեգործական արտադրանքը գոյություն է ունեցել 17- դարում, սակայն հայ խորհրդային արվեստաբան և մշակույթի վաստակավոր գործիչ՝ Սերիկ Դավթյանը[11] փաստում է 1510թ. Սևրի թանգարանում պահվող նմուշի մասին՝ մի բաժկաման հայերեն մակագրությամբ, ինչը վկայում է հայ վարպետների հախճապակու արտադրության փորձի մասին դեռևս Անիի և Դվինի ժամանակներից[9]:

Նկ. 1 Քյոթահիայի Հախճապակյա բաժկաման. 1510 թվական:

Այս մշակույթի շարունակությունն է Քյոթահիայի հախճապակեգործությունը: 1928թ. «Ամենուն տարեցույցում» Համբարձում Զորդանը[12, 13] խոսելով հայկական հախճապակու մասին գրում է. «Դեռ վերջերս ՝ 1912 -ին Անիի եկեղեցու մեջ, որոշ առարկաների հետ գտնվեցին նաև թանկարժեք հախճապակյա ամանների մասեր, շատ նուրբ ջնարակներով, որոնք արաբերեն վերտառություններ են կրում այն պատճառով, որ Հայաստանի գեղարվեստական արտադ-րությունները, մասնավորապես կավե ամանները մեծ ընդունելություն են գտել և սուղ գնահատվում էին ամբողջ արաբական աշխարհում»[12]:

Նկ. 2 Քյոթահիայի Հախճապակյա ջնարակված ամաններ:

Ստեղծագործելով նոր միջավայրում հայ վարպետները կրել են տեղական ավանդույթների ազդեցությունը, բայց շարունակել են պահել ազգային արվեստի ուղին: Հայ վարպետների աշխա-տանքներում կային իսլամական տարրեր, քանի որ հայ պատվիրատուների հետ մեկտեղ կային մուսուլման պատվիրատուներ, որոնց համար կերտվում էր իսլամական մոտիվներով հորինվածք: Այս պարագայում մեծ դերակատարում ուներ պատվիրատուի ճաշակը[14]:

Կատարողական սկզբունքների մեջ կար միասնություն, որը արտահայտվում էր իրի ձևի, նյութի և կիրառելիության մեջ՝ համակցված բովանդակությանը կամ գաղափարին: Ծագումնա-բանության և փոխազդեցությունների հարցը Քյոթահիայի հախճապակու արվեստի ամենավիճելի հարցերից է: Օրինակ Յուրի Միլլերը նշում է, որ հայ վարպետները ստեղծագործել են քրիստո-նեական թեմաներով, նաև հայոց պատմության նշանավոր անձանց դիմանկարներ են կերտել: Սակայն նա չի առանձնացնում Քյոթահիայի արվեստը թուրքական խեցեգործությունից, ավելին այն համարում էր վերջինիս շարունակությունը[12]:

Քյոթահիայի հախճապակին տարբերվում է ձևի և նկարազարդումների յուրօրինակությամբ: Նկատվում են երկու տարբեր աշխարհայացքային միտումներ՝ հայկական և մուսուլմանական թեմաներով, բայց կատարողական և գեղարվեստական սկզբունքները նման են:

Նկ. 3 Քյոթահիայի հայկական և մուսուլմանական հախճապակյա նմուշներ:

Քյոթահիայի արվեստը արմատներով հայկական է, դիտվում է միջարևելյան արվեստում, այդ իսկ պատճառով խոսում ենք հայկական արվեստի հետ սերտ առնչությունների մասին: Քյոթահիայի ամբողջ արտադրանքը կարելի է բաժանել երեք խմբի՝ սպասք, երեսպատման սալիկներ և եկեղեցական ջահերի ձվաձև կախիկներ: Եթե սպասքը և սալիկները ընդունվում էին մուսուլմանական աշխարհում, ապա ձվաձև կախիկները զուտ հայկական էին, սերտորեն կապված քրիստոնեությանը: Հետաքրքիր է, որ նույն ձվաձև կախիկի ձևանմուշի վրա արված ավետարանական թեմաներով զարդանախշերը և մուսուլմանական մոտիվներով արված բուսական զարդանախշերը արտահայտում են երկու մշակույթների ավանդույթները**:**

Քյոթահիայի դեկորատիվ կիրառական արվեստը արտահայտվել է վառ գույների գործածմամբ, բուսական և երկրաչափական զարդանախշերով, ինչպես նաև կրոնական, բարոյախրատական, երբեմն նույնիսկ խաղարկային պատկերագրությամբ, ինչը հստակորեն վկայում է Քյոթահիայի կիրառական արվեստի համաժամանակյա տնտեսական և արհեստագործական բնույթի մասին:

Հախճապակյա առարկաների բազմազանությունը, շքեղությունը, նյութի ամրությունը հռչակել են Քյոթահիայի հայ վարպետներին արևելյան և եվրոպական շուկաներում: Հայատառ արձանագրություններով, հայ վարպետների ստորագրություններով ու դրոշմներով առարկաները խոսում են Քյոթահիայի հայկական խեցեգործական դպրոցի մասին: Քյոթահիայի խեցեգործության մեջ առաջնահերթ էր դեկորատիվ սալիկների արտադրությունը, որոնք կիրառվել են հայկական և հունական եկեղեցիները, օսմանյան մզկիթները հարդարելու համար: Հախճապակու մեջ իշխող էր կապույտի և սպիտակի գունային զուգորդումը անթափանց ջնարակային նկարազարդումներին[1,9]:

Նմանօրինակ նմուշներից շատերը պահպանվում են Էջմիածնում, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում և այլուր: Այս ժառանգությունը անհրաժեշտ է վերաիմաստավորել ոչ միայն որպես անցյալի փառահեղ մնացորդ, այլ որպես շարունակական ներշնչման աղբյուր արվեստագետների, մշակութաբանների, և ընդհանրապես հասարակության համար[15]:

Հայ վարպետները կավագործության ասպարեզում գեղարվեստական բարձր ճաշակի և նորարարությունների ձևավորողն էին: Հայ վարպետների մասնագիտական փորձառությունը և գեղարվեստական մոտեցումները պահպանեցին հայկական միջնադարյան ժառանգությունը, մյուս կողմից սինթեզեցին նորը համապատասխան տվյալ ժամանակաշրջանի ոճին և գեղագիտությանը[7]:

Քյոթահիայի կերամիկայի ուսումնասիրությունը բացահայտում է խաչմերուկվող մշակույթները, ավանդույթներն ու քաղաքական անցքերը: Այն արտացոլում է մի դարաշրջան, երբ ծաղկող արվեստը հանդիսանում էր ազգային ինքնության, համայնքային հիշողության և գեղագիտական փորձի կրող: Այն իր բազմաշերտությամբ և ոճային համադրություններով հենք է հանդիսանում ժամանակակից կիրառական արվեստի համար[16]:

Նկ. 4 Քյոթահիայի կերամիկական արվեստի նմուշները:

Քյոթահիայի կավագործական- կերամիկական արվեստը բաժանվում է սպասքի, երեսպատման սալիկների և եկեղեցական ջահերի ձվաձև կախիկների: Սպասքը և սալիկները ընդունվում էին մուսուլմանական աշխարհում՝ զարդանախշված բուսական ոլորավուն դեկորներով, աստղաձև և երկրաչափական հորինվածքներով: Այս զուգադրումը վկայում է ոչ միայն տարբեր մշակույթների փոխազդեցության, այլև մշակութային համակեցության, փոխըմբռնման մասին, որը ձևավորվել էր Քյոթահիայի բազմամշակութային կենտրոնում:

Հայ վարպետների հախճասալիկներով զարդարված են Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի Հարության տաճարը, Կեսարիայի Սուրբ Կարապետ վանքի Հրեշտակապետաց եկեղեցին, Կոստանդնուպոլսի և Նոր Ջուղայի եկեղեցիները[15]:

Ձվաձև կախիկները եկեղեցական ջահերի կախիկներ էին, որոնք կիրառվում էին եկեղեցիների ինտերիերում: Դրանց ձևակազմություններն ու նախշազարդումներն ունեին կրոնական բովանդակություն և գեղագիտական պահանջ: Ձվաձև կախիկները հանդիսանում էին եկեղեցական խորհրդանիշներ՝ արտահայտող հարության, հավերժության և սրբության գաղափարները: Դրանց վրա հաճախ պատկերվում էին Ավետարանի պատկերներ, խաչեր, հրեշտակներ կամ սրբերի խորհրդանշաններ, որոնք փոխանցում էին կրոնական և ազգային ինքնության բովանդակություն: Հրեշտակների թևերը միագույն կանաչ են, մազերը սև, դեմքի ֆոնը սպիտակ: Աչքերը լայն են, կլոր, բիբի շարժումը դեպի կողմ և դեպի քունքը գնացող: Որոշ դեպքերում հրեշտակների թևերի չորս անկյուններում խաչեր են նկարվում: Խաչերը պարզ գրաֆիկայով ծաղկախաչեր են: Գծային առումով հայկական տիպի դիմանկարները Քյոթահիայի և Անիի, Դվինի հախճապակեգործության մեջ ընդհանուր են, գույնով տարբեր:

Հրավարդ Հակոբյանը բնորոշում է[17]. «այստեղ աշխուժություն է մտցնում գույնը»: Ձևը, գույնը և գիծը ոճական հենակետերն են, որոնք համագործակցելով գաղափարի հետ ծնում են արվեստի ստեղծագործություն: Ծավալի դինամիկայից բխում է գծի դինամիկան, որն ակնհայտ է կախիկների նկարազարդման մեջ:

Ձվաձև կախիկները նյութական վկայություններ են մի ժամանակաշրջանի, երբ Քյոթահիան հանդիսանում էր ոչ միայն արհեստագործական կենտրոն, այլ նաև մշակութային խաչմերուկ: Դրանք հայկական կիրառական արվեստի զարգացումների, փոխազդեցությունների և ժառանգության պահպանման գործընթացների վկայություններն են:

Հախճապակեգործության լավագույն նմուշները պահպանվում են Էրմիտաժում, Լուվրում, Վենետիկի Սուրբ Ղազարի Մխիթարյան Միաբանության թանգարանում[18, 19, 20]:

Այսօր Գյումրու խեցեգործությունը շարունակում է Քյոթահիայի խեցեգործության հայկական ավանդույթները: Այն շաղկապում է երկու քաղաքակրթությունները խեցե նրբագույն հորինվածքներով[9]:

Եզրահանգում

Քյոթահիայի հախճապակեգործության ձևագոյացման հիմքում հայկական մանրանկարչությունն է զուսպ գունային լուծումներով: Գունային լուծումներին դեղինի, կանաչի, դարչնագույնի, կարմիրի, վարդագույնի կոնտրաստային համակցմամբ ջնարակված կավե հորինվածքներից առաջարկում ենք ստեղծել նրբագույն ապակեշող հորինվածքներ ավանդական տեխնոլոգիայի կիրառությամբ:

Առաջարկում ենք ձվաձև կախազարդի հարթության վրա գծային շարժմանը լրացնող ծավալային շարժեր՝ համաչափ և անհամաչափ դեկորների կիրառությամբ: Այս դեպքում ձևակազմությունը նյութականությունը, գունային լուծումները ոճային հենակետեր են՝ համակցված գաղափարին կամ բովանդակությանը: Ծավալային դինամիկան հայկական ավանդական հենքով ժամանակակից հախճապակեգործության նորովի արտահայտությունն է:

Գրականություն

1. **Kurdian H.**, Armenian Ceramic Art of Kütahya, Jerusalem, St. James Armenian Patriarchate Press (Gulbenkian Fund), 1978, 160 p.
2. **Ղազարյան Մ. Մ.**, Հայկական կիրառական արվեստ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983, 140 էջ:
3. **Մխիթարյան Ա.**, Քյոթահիայի հայկական արվեստը, Երևան, 2010, 144 էջ:
4. **Pope A.**, A Survey of Persian Art, London, O.U.P., 1964, 14 volumes, 2800 p.
5. **Mango C.**, Byzantine Architecture, Milan, 1986, 215 p.

6. **Ստեփանյան Ն.**, Միջնադարյան Հայաստանի կիրառական արվեստը, Լենինգրադ, ԳԱ հրատարակչություն, 1981, 162 էջ:
7. **Ստեփանյան Ն.**, Հայկական կիրառական արվեստ, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1985, 208 էջ:
8. **Մխիթարյան Ա.**, Քյոթահիայի հայկական արվեստը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010, 144 էջ:
9. **Դավթյան Ս. Շ.**, Հայ խեցեգործության պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1972, 180 էջ:
10. **Միլլեր Յու.**, Թուրքիայի գեղարվեստական կերամիկա, Լենինգրադ, Ավրորա հրատարակչություն, 1972, 184 էջ:
11. **Դավթյան Ս. Շ.**, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմությունից, Երևան, ԳԱ հրատարակչություն, 1981, 180 էջ:
12. **Լապճինճյան Թ.**, Ամէնուն տարեցոյցը, Փարիզ, «Մասիս» տպարան, 1928, 656 էջ:
13. **Տեր-Վարդանյան Հ.**, Հայ հախճապակին, Կ. Պոլիս, Համբարձում Զորդանի տպարան, 1928, 32 էջ:
14. **Grube E.**, Islamic Pottery of the Medieval Period, New York, Faber and Faber, 1976, 384 p.
15. **Kenaan-Kedar N.**, The Armenian Ceramics of Jerusalem: Three Generations, 1919-2003, Jerusalem, Yad Izhak Ben-Zvi / Eretz Israel Museum, 2003, 166 p.
16. **Allan J. W.**, Islamic Ceramics, London, Ashmolean Museum, 1991, 44 p.
17. **Հակոբյան Հ.**, Վասպուրականի մանրանկարչությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976, 164 էջ:
18. **Makariou S.**, Les arts de l'Islam au musée du Louvre (Official Catalogue), Paris, Éditions Hazan / Musée du Louvre, 2012, 448 p.
19. **Иванов А. А.**, Искусство стран ислама. Керамика и металл в собрании Эрмитажа, Санкт-Петербург, Издательство Государственного Эрмитажа, 2004, 240 с.
20. **Զեքիյան Լ.**, Սուրբ Ղազար կղզի. Մխիթարեան Միաբանութիւնը և թանգարանները, Վենետիկ, Տպարան Սուրբ Ղազար, 1990, 144 էջ:

REINTERPRETATION OF KUTAHYA CERAMICS IN CONTEMPORARY APPLIED ART

Meri A. Avetisyan
University named after M. Mashtots,
Yerevan, M. Heratsi St., 2/1,
e-mail: avetisyanmeri1997@mail.ru

Anahit M. Grigoryan
University named after M. Mashtots,
Yerevan, M. Heratsi St., 2/1,
e-mail: hitgrigoryan@mail.ru,
ORSID ID: 0009-0007-9292-8672

Abstract

The paper explores the stylistic characteristics of Armenian decorative applied art in Kütahya, focusing particularly on high-value specimens of faience and ceramic craftsmanship. The religious, moral-didactic, and at times playful or narrative iconography of Kütahya's applied art reflects the profound cultural expressiveness of the local artisanal environment.

The study presents a comprehensive examination of Kütahya ceramics and pottery, aiming to reveal an epoch of intersecting cultures and traditions, when art not only flourished but also served as a vital carrier of national identity, communal memory, and unique aesthetic experience. This multilayered and stylistically diverse heritage forms a solid foundation for contemporary applied art. The research investigates the worldview tendencies embodied in Kütahya ceramic forms, expressed through the artistic languages of traditional Armenian, as well as Persian, Seljuk, and Byzantine art. Innovative design solutions are proposed for creating contemporary ceramic compositions based on national principles of form-generation.

Keywords: ceramic composition, pottery forms, floral and geometric ornaments, foundation of national design, artistic innovation.

Novelty

Recent global and regional scholarly research has repositioned Kütahya as a prominent hub of art-historical and cultural significance.The works of Arbak Mkhitaryan explicitly highlight the substantial involvement of Armenian masters in Kütahya's decorative applied arts, spanning from technological form-generation techniques to original iconographic solutions.

In this study, Kütahya craftsmanship is examined through a detailed analysis of the stylistic features of pottery structures and embossed decorative tiles that historically adorned the interiors of Armenian and Greek churches, as well as Ottoman mosques.

By synthesizing national traditions with contemporary innovative trends, we propose new artistic solutions capable of responding to the challenges of globalization and preserving local identity:

- Transformation of Proportional Systems: By fragmenting classical symmetrical systems and introducing asymmetrical elements, new contemporary compositions are created, while strictly maintaining the dominance of traditional structural architecture.
- Ornamental Synthesis: Through the integration of national ornaments into modern design forms, unique compositions featuring geometric, floral, and zoomorphic patterns are developed to accentuate contemporary styling.
- Tectonic Harmony: By emphasizing decorative elements that convey national thematic content, balanced tectonic systems are formed, ensuring that artistic expression is seamlessly aligned with the functionality of the piece.

Conclusion

At the core of Kütahya ceramic design lies the tradition of Armenian miniature art, notable for its restrained and noble color palette. By combining contrasting tones of yellow, green, brown, red, and pink, we propose to create refined, glass-glazed compositions with a brilliant luster, executed through authentic traditional technologies.

As a practical application, it is suggested to enhance the design of traditional egg-shaped pendants by introducing volumetric, plastic movements that complement linear dynamics through the calculated use of both symmetrical and asymmetrical decors. In this approach, the structural form, materiality, and color solutions serve as pivotal stylistic reference points interconnected with the core concept and content of the artwork. The volumetric dynamics thus emerge as a fundamentally new, modern expression of Kütahya ceramic art, deeply rooted in Armenian cultural heritage.

ПЕРЕОСМЫСЛЕНИЕ КЮТАХИЙСКОЙ КЕРАМИКИ В СОВРЕМЕННОМ ДЕКОРАТИВНО-ПРИКЛАДНОМ ИСКУССТВЕ

Мери А. Аветисян
Университет им. М.Маштоца,
Ереван, ул. Гераци, 2/1,
e-mail: avetisyanmeri1997@mail.ru

Анаит М. Григорян
Университет им. М.Маштоца,
Ереван, ул. Гераци, 2/1,
e-mail: hitgrigoryan@mail.ru
ORSID ID: 0009-0007-9292-8672

Аннотация

В работе исследуются стилевые особенности армянского декоративно-прикладного искусства Кютахии, в частности высокохудожественные образцы фаянсового и керамического ремесла. Религиозная, морально-назидательная, а порой и повествовательно-игровая иконография кютахийского искусства отражает глубокую культурную выразительность местной ремесленной среды.

В исследовании представлен анализ кютахийской керамики и гончарных изделий с целью воссоздания картины эпохи пересечения культур и традиций, когда искусство не только процветало, но и служило носителем национальной идентичности, коллективной памяти и уникального эстетического опыта. Это многоуровневое и стилистически разнообразное наследие служит прочным фундаментом для современного декоративно-прикладного искусства. В статье рассмотрены мировоззренческие тенденции кютахийских керамических форм, выраженные через художественные языки традиционного армянского, а также персидского, сельджукского и византийского искусства. Предложены инновационные решения для создания современных композиций на основе национальных принципов формообразования.

Ключевые слова: керамическая композиция, гончарные формы, растительные и геометрические орнаменты, основы национального формообразования, художественные инновации.

Новизна

В последние годы научные исследования как турецкие, так и армянские и международные превратили Кютахию в центр художественно-исторического и культурного значения. В трудах Арбака Мхитаряна освещается участие армянских мастеров в декоративно-прикладном искусстве Кютахии от технологических методов формообразования до иконографических решений.

В данной работе исследуется кютахийское гончарное ремесло посредством анализа керамических конструкций и рельефно-декорированных плит, которые использовались в качестве украшений интерьеров армянских и греческих церквей, а также османских мечетей.

На основе сочетания национальных традиций и современных инновационных тенденций предлагаются следующие новые художественные решения, отвечающие вызовам глобализации:

- Создание новых композиций с преобладанием традиционной симметрии посредством фрагментации симметричных систем и введения асимметричных элементов.
- Формирование новых композиций посредством объединения национальных орнаментов и современных дизайнерских решений с геометрическими, растительными и зооморфными мотивами, подчёркивающими современный стиль.
- Формирование тектонических систем с декоративными акцентами, выражающими национальное содержание и обеспечивающими гармонию и функциональность композиции.

Заключение

В основе кютахийского формообразования лежит армянская миниатюра с её сдержанными цветовыми решениями. Путём сочетания контрастных оттенков жёлтого, зелёного, коричневого, красного и розового предлагается создавать изящные глазурованные композиции с применением традиционной технологии.

Предлагается усовершенствовать дизайн подвесок яйцевидной формы, дополнив линейное движение объёмными формами посредством симметричных и асимметричных декоров. В данном подходе форма, материал и цветовые решения становятся стилистическими опорными точками, связанными с идеей и содержанием произведения. Объёмная динамика в этом случае является современным переосмыслением кютахийской керамики на основе армянских художественных традиций.